

զահարան, որն օր կամեցած էղիլ ին բերելու Բրական, այսինքն սաքսօնին երկրօջն, և կասին թէ 2 միլիօն դալէր գնորդիլ է օր ամէն մէկ զօլտառդին երկ երկու հազար զօլթայ փայ է էկիլ է ու անկի դուս անչափ ալուր և գարի և ամենայն ցեղ բանը նայև զգանձ ալ կօրած ըլան. կարծիմ թէ հոտ այլ լաւ պի լսվի և այլն:

Եւ երկուսում խապարն մեր երկրէն կուգրին թէ բրուշիեային երկիրն, այսինքն պրանտայուրին հրամանին տակն կէցող ժողովուրդն դառցած ըլան Լուդրան և Գալլին. 10000, այսինքն ժՌ հօգի և 600 գահանայ և Ա գանօնիքն. ու գանօնիքն զարաս զարգվիլ է և մեծ թաքաւորի դուստր առիլ է, զի ինքն ալ մեծ մարդ էղիլ է և մեծ տանէ. չիտիմ թէ խորդ թէ սուտ. աստուած տայ որ սուտ ըլայ, մայ նիշաններն սուտի չին. աստուած պէթառէն պահէ. զիմ ահս ազ իծէր և աս է միշդ աստուած իսօն բարին անէ. ամէն. բաւէ:

## ՃԺԵ.

Բենեդիկտոս ԺԳ. մեծ հանդիսաւորութեամբ կը շնորհէ Պատրիարքական Պալլիում մեր Արքանամ Պետրոս Ա. Պատրիարքին՝ իր Առաքելական պալատին մէջ՝ Աստուածածնայ Անարատ Յղութեան տօնին:

Մեր նամակագիրը ոչ միայն կու տայ մանրամասն նկարագիրը սոյն հանդիսին, այլ նաև յոյժ կը շահագրգռէ Սրբազան Հօր կողմանէ եղած ընծաներոջն ու պատուարեր արտօնութեամբ մը, որոնք ստուգիւ նշաններ են Անոր հայրական բացառիկ սիրոյն, ինչպէս այնքան որոշակի կ'արտայայտուի նամակիս մէջ, մանաւանդ հոն նշանակուած ինչ ինչ աննպաստ պարագաներու միջոց:

Գերարգիլի և գերապատուելի տերութեան ձերում յոյժ սիրով և յարգութեամբ ողջոյն մատուցանելով

... Նաև հետեւելով առ ի ծանուցանել գերարգելութեան ձերում գերապայծառ պետրոս պատրիարքին կողմանէ յայտ առնեմ, որ որպէս միուս զրովս ծանուցի աստուած(ածնայ) մաքուր յղացման օրն ընկալաւ Փափէն զպատրիարքական փալիօն, միայն թէ ոչ ի Սանթա Մարիայ մաճօւ, այլ փափի պալատն հանդիսաւորապէս տաաջի բազմաց կարտինալաց, ետ որոյ փափն ընծայեց սմայ մին պատուական զումու(իս)թ խաչ, մին մատանի և մին պատուական սուռչառ, և ընդ իւր տարեալ էր ազաչայ պետրոսն որ առաջի անգամ համբուրեց զօտն փափին. յոյժ սիրով ընկալաւ զնոսաւ. Եւս յայտ լիցի որ փափն հրամայեալ էր թէ փոփականտա որչափ հայու կամ արպու լեզուաւ գրեանք կան, լաւ կազմով կազմեն, որ և արարեալ և պատրաստեալ էին. և երբ պատրիարքն զնաց փափին շնորհակալութիւնս մատուցանել վասն փալիօին, նոյն պատրաստեալ զրքերն և հրամանուցդ յղեցեալ աստուածաշունչներուն մէկն ետ պատրիարքին. յաժմս աւարտեցան արարողութիւնքն, բայց սոյն պատրիարքս կայ տկարութեամբ ի օտից և փորու խոստուկի կողմանէ:

Այն որ նշմարեցի միուս զրովս թէ մօնսինեօր պօնան ժողովքին և քարտինալ փէթրային գրեր է, զանազան պատճառաւ անհաւանութիւն տալով վասն սորայ պատրիարքութեան և տեղս հաստատման կողմանէ, որ և առաջ քան զփալիօն տալն փափին ծանուցին, և փափն բարկացեալ ոտնակոխ արար զգիրն նորին ասելով, [եթէ] ոք եկեցցէ առ սուրբ աթոռն պարտ է ընդունել զնա, ևս առաւել եկեղեցնայ աշխատաւոր հաւատարիմ որդիքն. բայց կարծեմ սոյն բանս դառնայ ի մնաս նոյն մոնսինեօր պօնային . . . . . աղայչա պետրոսին հետն պատկերներն և տնօրինման գիրն կու ուղարկեմ: Սոյն պատրիարքն իմացաւ այս տնօրինման կողմանէ. ասաց ինձ. Թող մնայ այդ, մի առներ, երբ